Հասցե՝ Արտաշիսյան 46/1, Երևան 0039
հեռ.՝ 010303010
mc@astvatsamayr.am

«ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ»
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
"SOURB ASTVATSAMAYR" Medical Centre JSC

№ ԿՀ-335 12.06 2025թ.

ԱՁ ՌԻՏԱ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Հարգելի՛ տիկին Գասպարյան,

«Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ի և ԱՁ Ռիտա Գասպարյանի միջև կնքվել է N ՍԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/8-1 (կնքված 2024թ դեկտեմբերի 25-ին), N ՍԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/9-1 (կնքված 2024թ դեկտեմբերի 30-ին), N ՍԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/20-1 (կնքված 2025թ փետրվար 28-ին), N ՍԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/23-3 (2025թ մարտի 06-ին), ծածկագրերով բժշկական նշանակության ապրանքների մատակարարման պայմանագրեր, որոնց շրջանակներում ԱՁ Ռիտա Գասպարյանին՝ 2025 թվականի մայիսի 26-ին ներկայացվել է պատվեր-հայտ:

Պայմանագրի համաձայն պայմանագրով ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, սահմանվում է 20 օրացուցային օր: Ընդ որում, սույն պարբերությամբ սահմանված ժամկետի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից՝ բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում: Այնուհետև, մատակարարումները պետք է իրականացվեն ըստ փաստացի պատվերների՝ ոչ ուշ քան 3 աշխատանքային օրվա ընթացքում, սակայն հայտով ներկայացված ոչ մի չափաբաժնի մասով մատակարարում չի իրականացվել:

«Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենին պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից 06.02.2025թ. ներկայացրած զեկուցագրի համաձայն՝ ԱՁ Ռիտա Գասպարյանն սահմանված ժամկետում չի իրականացրել ստորև ներկայացված չափաբաժիններով ապրանքների մատակարարումը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Ելնելով վերոգրյալից և հինք ընդունելով Պայմանագրի 8.9-րդ կետը «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ն միակողմանի մասնակի լուծում է վերոնշյալ պայմանագրերը նշված համապատասխան չափաբաժիններով՝

- ՍԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/8-1 ծածկագրով պայմանագիրը 10, 11, 79-րդ չափաբաժինների մասով,
- ՍԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/9-1 ծածկագրով պայմանագիրը 59, 115-րդ չափաբաժինների մասով,
- ՍԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/20-1 ծածկագրով պայմանագիրը 61, 86, 87-րդ չափաբաժինների մասով,
- ՍԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/23-3 ծածկագրով պայմանագիրը 5-րդ չափաբաժնի մասով,

Պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառվում է ՀՀ կառավարության 2017թ մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. պարբերության "*Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը...*"

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկվում է պայմանագրերը միակողմանի լուծելու հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող 7 օրվա ընթացքում «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ի «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի 1570053952390100 հաշվեհամարին վճարել

- ✓ **որակավորման ապահովման՝**
- ✓ ՍԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/8-1--- 552,720 (հինգ հարյուր հիսուներկու հազար յոթ հարյուր քսան) ՀՀ դրամ,
- ✓ ՍԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/9-1--- 1,321,695 (մեկ միլիոն երեք հարյուր քսանմեկ հազար վեց հարյուր իննսունհինգ) ՀՀ դրամ,
- ✓ ՍԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/20-1 --- 54,000 (հիսունչորս հազար) ՀՀ դրամ,
- ✓ ՍԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/23-3 -- 22500 (քսաներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ,
- ✓ **պայմանագրի կատարման ապահովման՝**
- ✓ ՍԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/8-1 - 368,480 (երեք հարյուր վաթսունութ հազար չորս հարյուր ութսուն) ՀՀ դրամ,
- ✓ ՍԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/9-1 ---881,130 (ութ հարյուր ութսունմեկ հազար մեկ հարյուր երեսուն) ՀՀ դրամ,
- ✓ ՍԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/20-1—298,952 (երկու հարյուր իննսունութ հազար ինը հարյուր հիսուներկու) ՀՀ դրամ,
- ✓ ՍԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/23-3---15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ,

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ գրությամբ սահմանված ժամկետում ապահովումները չվճարելու դեպքում Պատվիրատուի կողմից կկայացվի պատճառաբանված որոշում, որը կուղարկվի լիազոր մարմին՝ ԱՁ Ռիտա Գասպարյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացը սկսելու նպատակով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՏՆՕՐԵՆ՝ **ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶՈՀՐԱԲՅԱՆ**